Մեդիագրագիտության խթանում: Արտադասարանային միջոցառում

- Համատեղ դաս Հայոց լեզու, Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն առարկաներից



Դասընթացավար՝ Գոհար Գրիգորյան, Շուշանիկ Ամիրխանյան
Տավուշի մարզ Գոշի միջն. դպրոցի ուսուցչուհիներ

Թեման՝ «ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿԸ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՈՃԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

10-12-րդ դասարաններ

(Տևողությունը 90 րոպե)

Նպատակը և վերջնարդյունքները

Նպատակ՝

- Զարգացնել մեդիայի տարբեր ռեսուրսներում ներկայացվող տեղեկատվության նկատմամբ քննադատական մտածողություն
- Զարգացնել բանավեճ վարելու հմտություններ

Վերջնարդյունք՝

- Ցուցաբերի քննադատական մտածողություն, վերլուծի տարբեր տեղեկատվությունները, որոշի աղբյուրի հուսալիությունը:
- Տիրապետի բանավեճ վարելու հմտությանը, դրսևորի հարգանք և համբերություն:

ՀՊՉ վերջնարդյունքներ Մ1, Մ5, Մ7 , Մ8, Մ11, Մ12, Մ13, Մ14, Մ15,

Մ16, Մ20, Մ23, Մ24, Մ27, Մ28, Մ31, Մ32, Մ35, Մ36,

- **Խաչվող հասկացություններ և գաղափարներ՝**

  Պատճառ և հետևանք, կառուցվածք և գործառույթ, անհատներ և հարաբերություններ

- **Անհրաժեշտ պարագաներ՝** համակարգիչ, տեսացրիչ, շրջանաձև դասավորված նստարաններ, թերթիկներ, գրիչներ, բարձրախոս, անհրաժեշտ ձայնագրություններ:

- **Ընտրված մեթոդներ և մեթոդական հնարներ՝** քննարկում

Դասի ընթացքը

- **Քայլ 1.** Ուսուցիչները ներկայացնում են բանավեճի թեման և կանոնները Թե ինչպես մի անգամ Կարմիր գլխարկը տնից դուրս եկավ…
- **Քայլ 2**. Կատարվում է դերերի բաշխում, յուրաքանչյուր լրատվականի համար ընտրում է մեկ ներկայացուցիչ աշակերտներից, ով կլինի ներկայացված դիրքորոշումը պաշտպանող կողմը: Կան հրավիրված մասնագետներ՝ իրավաբան, կենդանիների պաշտպան, սոցիալական աշխատակից, հոգեբան, ովքեր ցանկալի է լինեն մանկավարժական կազմից:

Դերեր չունեցողները մասնակիցում են քննարկումներին

Դասի ընթացքը

- **Քայլ 3.** Հերթականությամբ սահիկաշարի միջոցով ցուցադրվում են լուրերը, ներկայացուցիչը ընթերցում է այն: Յուրաքանչյուր լուրից հետո սկսվում է բանավեճ և քննարկում պաշտպանող և քննադատող կողմերի միջև: Ըստ անհրաժեշտության միջամտում են մասնագետները
- Լուրերը ընդմիջվում են կարճ գովազդով՝ մեդիայի ազդեցությունը մարդկանց ընտրության վրա:

Լուրեր.am

- Այսօր ժամը 13:00-ի սահմաններում տնից դուրս է եկել Կարմիր գլխարկը և նրա գտնվելու վայրը անհայտ է:
- Նախնական տվյալներով նա անտառում բնակվող տատիկի համար կարկանդակներ է տեղափոխել: Այս պահի դրությամբ տատիկի գտնվելու վայրը և՛ս անհայտ է: Դեպքի կապակցությամբ տարբեր լրատվականներում տարբեր տեղեկություններ են շրջանառվում:

Այժմ ներկայացնենք **ԾՆՈՂ.ԱՄ** լրատվականի ներկայացրած տեղեկությունները.

Ծնող.am

- Անհիմն մեղադրանքներ են հնչում Կարմիր գլխարկի ծնողների հասցեին, թե ինչու՞ են նրանք իրենց աղջնակին միայնակ ուղարկել անտառ: Կարծիքներ են շրջանառվում, որ նրանք անպասխանատու ծնողներ են: Այն փաստը, որ ծնողները հոգ են տանում անտառում միայնակ բնակվող տարեց կնոջ մասին՝ նրան կարկանդակներ և տարբեր ուտելիքներ ուղարկելով, խոսում է նրանց մարդկային բարձր որակական հատկությունների մասին: Չնայած նրան, որ Կարմիր գլխարկը միայնակ է ճանապարհ ընկել, դա առաջին դեպքը չի եղել և մինչ այս այդ ճանապարհը եղել է անվտանգ: Կարող ենք վստահաբար ասել, որ այստեղ անտառային այլ ուժեր իրենց ներդրումն ունեն, քանի-որ տատիկի համար նախատեսված կարկանդակներին, շանտաժի միջոցով, տիրանալու մի քանի անհաջող փորձից հետո նրանք անցել են ուժային մեթոդին:
- Որպեսզի պարզենք դեքպի մանրամասները, մեր գաղտնի գործակալին ուղարկեցինք անտառ, որտեղ նա հայթայթեց հետևյալ լուրերը:

Կաչաղակ.am

- **Կաչաղակ.ամ** -ից հետևյալ տեղեկությունները.
- Այդ օրը գայլը, ակնհայտորեն, լինելով մի քանի շաբաթվա քաղցած, դուրս էր եկել իր բնակության սովորական տարածքից և սնունդ էր որոնում այն հատվածում, որտեղով անցնում էր կարմիր գլխարկը: Որոշ ականատեսներ պնդում են, որ տեսել են գայլին Կարմիր գլխարկի հետ զրուցելիս:
- Ակնհայտորեն, գայլը տեղեկացված է Կարմիր գլխարկի գտնվելու տեղի մասին: Սակայն տեսեք, թե ինչ է գրում Գայլ.tv-ն

Գայլ.tv

- **Գայլ.tv**-ն:
- Ուժեղներին տապալելու հերթական անհաջող փորձ. Ակնհայտ է, որ անտառի բնակիչները իրենց թույլ և նենգ էությունը արդարացնելու և գայլից ազատվելու նպատակով , ընտրել են նրան՝ ապատեղեկատվության միջոցով վարկաբեկելու ճանապարհը: Գայլը բավականին մեծ ուժի տեր է և չի կարող մնալ քաղցած մի քանի շաբաթ: Նա անտառի լիիրավ անդամ է և կարող է քայլել այնտեղ, որտեղ ցանկանում է: Մենք պատասխանատվության ենք ենթարկելու բոլոր նրանց, ովքեր համարձակվում են նման կեղծ և ամոթալի լուրեր տարածել:
- Մենք ունենք այս իրադարձությունների և մեկ կողմի ներկայացուցիչներ, ովքեր լույս կսփռեն դեպքերի վրա:
- Ահա թե ինչ է գրում **Որսորդներ tv.-ն**

Որսորդներ.tv

- Այսօր ժամը 14:00 շրջանում, որսորդները շրջելով անտառում, նկատել են փոքրիկ տնակ: Տնակի դուռը բաց էր, ինչը նրանց մոտ անհանգստություն է առաջացրել: Մտնելով բնակարարան որսորդները նկատել են գայլին, որի փորը անբնական ուռած էր: Ցանկանալով օգնել գայլին, նրանք ճղել են գայլի փորը: Սակայն այնտեղից դուրս են հանել Կարմիր գլխարկին և նրա տատիկին: Այնուհետև որսորդները կարել են գայլի փորը և նրան բաց են թողել անտառի խորքերում: Կարմիր գլխարկի և տատիկի կյանքին վտանգ չի սպառնում, նրանք ստացել են հոգեբանական աջակցություն և շուտով կհայտնվեն տաղավարում:

Սենսացիաներ.

- Ասում են, որսորդները ոչ թե գայլին պարզապես բաց են թողել, այլ նրա փորը լցրել են քարեր ու նոր անտառում բաց թողել:
- Այստեղ են ասում. Ագահությունը մարդուն կործանում է:
- Գայլը այնքան քաղցած էր, որ չցանկացավ բավարարվել միայն Կարմիր գլխարկով, նա ցանկացավ միանգամից երկու մարդ ուտել՝ տատիկին և Կարմիր գլխարկին:

Կարմիր գլխարկ. am



- Ինչպե՞ս կարելի է անչափահաս աղջնակին, միայնակ ուղարկել անտառ՝ տատիկին այցելության: Արդյո՞ք դա չի նշանակում, որ նրա ծնողները բացարձակ անպատասխանատու են իրենց երեխայի նկատմամբ: Դա է փաստում նաև այն հանգամանքը, որ տատիկը, մեծ կին լինելով, միայնակ ապրում է անտառում:
- Կարմիր գլխարկը, փաստորեն, այդ ընտանիքի միակ հոգատար և պատասխանատու մարդն է,ով էլ արդյունքում հանդիսացավ ամենատուժող կողմը:

Կարծիքների փոխանակում

Քայլ 4. Բոլոր կողմերը կազմում են հաշվետվություն՝ հնչեցված և ներկայացված տվյալների հիման վրա՝ վերլուծելով բուն մեդիայի ազդեցությունը հանրության մտածելակերպ ձևավորելու վրա

Քայլ 5. Ներկայացնում են լսարանին

Ամփոփում.

Ի՞նչ եզրակացության հանգեցիք այսօրվա քննարկումից:

Ինչպիսի՞ն կլինի ձեր հետագա գործողությունները մեդիադաշտում որևէ սենսացիոն նորության հադիպելուց:

Ինչպիսի՞ն կլինեն ձեր գործողությունները որպես հասարակության անդամ:

10 րոպե

Ելքի քարտ.

Ի՞նչ նոր բան իմացա...

Ի՞նչը զարմացրեց...

Ի՞նչ առաջարկ ունեմ...

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում:

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ. 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/